ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<< 01>> <<նոյեմբերի >> 2011թ N 78

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄԻՔԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2)-րդ կետի, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության(նշանակման) կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.16 կետերի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N 86 որոշումը, Միքայել Սարգսյանի հետ կնքած 2009 թվականի սեպտեմբերի 1-ի N115 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի ա) ենթակետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1 2011 թվականի նոյեմբերի 1-ից Միքայել Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի << Հորբատեղի հիմնական դպրոց>> ՊՈԱԿԻ-ի տնօրեն, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. 2011 թվականի նոյեմբերի 1-ից լուծել Միքայել Սարգսյանի հետ կնքած 2009 թվականի սեպտեմբերի 1-ի N 115 աշխատանքային պայմանագիրը:

Ս.ԲԱԳՐԱՏՅԱՆ